Սնանկության գործ
№ ՍՆԴ/0953/04/22

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2022թ. օգոստոսի 29-ին

ՀՀ սնանկության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Գագիկ Հովհաննիսյանի, քննելով սնանկության գործն ըստ դիմումի Գագիկ Վարդանի Չախոյանի (անձնագիր՝ AS0216640, տրված՝ 06.06.2018թ. 003-ից, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կաշվեգործների փողոց. Տուն 492/2)՝ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին (անձնագիր՝ AM0907846, տրված՝ 19.10.2012թ., 003, հասցեն՝ ՀՀ ք.Երևան, Ն.Շենգավիթ, 4փ., 18տ.)՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Տ

1.<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

Գագիկ Վարդանի Չախոյանը 05.04.2022թ. դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու պահանջով:

Դատարանի 07.04.2022թ. որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ և սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Մայիս Հայրապետյանը:

Դիմումի օրինակը, դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով, պատշաճ կարգով ուղարկվել են պարտապան Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին, միաժամանակ առաջարկվել է 15 օրվա ընթացքում գրավոր վիճարկել իր սնանկությունը:

Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի կողմից 30.04.2022 թվականին ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել առարկություն՝ Գագիկ Չախոյանի՝ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու դիմումի դեմ, որպիսի պայմաններում հրավիրվել է դատական նիստ:

2. <u>Դիմողի իրավական դիրքորոշումը</u>.

Դիմող Գագիկ Վարդանի Չախոյանը ներկայացրել է հետևյալ փաստարկները:

Իր և Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի միջև 10.05.2021թ. կազմվել է պարտավորագիր, համաձայն որի՝ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը Գագիկ Վարդանի Չախոյանից ստացել է 130.000 ԱՄՆ դոլար գումար, որից 3.000 ԱՄՆ դոլարը պարտավորվել է վերադարձնել մինչև 27.06.2021թ., ևս 3.000 ԱՄՆ դոլարը՝ մինչև 27.07.2021թ. և 4000 ԱՄՆ դոլարը՝ մինչև 31.08.2021թ.-ը իսկ մնացած 120.000 ԱՄՆ դոլարը Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը պարտավորվել է վերադարձնել մինչև 10.05.2022թ.-ը:

Մինչ օրս պարտապանը չի վերադարձրել 2021թ. հունիսի 28-ից կետանցվող 3.000 ԱՄՆ դոլարը, 2021թ. հուլիսի 28-ից կետանցվող 3.000 ԱՄՆ դոլարը և 2021թ. սեպտեմբերի 01-ից կետանցվող 4.000 ԱՄՆ դոլարը:

Գտնում է, որ տվյալ պարագայում առկա են Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու հիմքեր, քանի որ վերջինիս պարտավորությունը հիմնված է գրավոր գործարքի վրա, պարտավորության չափը գերազանցում է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը, իսկ կետանցը գերազանցում է 90-օրյա ժամկետը:

Դիմող Գագիկ Վարդանի Չախոյանը Դատարանից խնդրել է Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին ճանաչել սնանկ:

Գագիկ Վարդանի Չախոյանի ներկայացուցիչ՝ Նորայր Ավագյանը 17.08.2022 թվականին հրավիրված դատական նիստին հայտարարեց, որ Դիմումատուի նկատմամբ դիմումում նշված կետանցված պարտքը՝ 10.000 ԱՄՆ դոլարը, մարված չէ, բացի այդ 17.08.2022թ. դրությամբ այլևս կետանցված է նաև պարտավորության մնացած մասը՝ 120.000 ԱՄՆ դոլար գումարի չափով:

Գագիկ Վարդանի Չախոյանի ներկայացուցիչ՝ Նորայր Ավագյանը 17.08.2022 թվականին հրավիրված դատական նիստին հայտարարեց, որ Պարտապանը Դատարանի կողմից պետք է սնանկ ճանաչվի պարտավորության ողջ գումարի՝ 130.000 ԱՄՆ դոլարի 90-օրյա ժամկետը գերազանցող կետանց թույլ տալու հիմքով:

Ներկայացված դիմումը հիմնավորելու համար Գագիկ Վարդանի Չախոյանի ներկայացուցիչ՝ Նորայր Ավագյանը, որպես ապացույց, Դատարան է ներկայացրել Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի կողմից 10.05.2021թ. Գագիկ Չախոյանին տրված «Պարտավորագիր» վերնագրմամբ ստացականը:

3. <u>Պարտապանի իրավական դիրքորոշումը</u>.

Պարտապան Արամայիս Պետրոսյանի ներկայացուցիչ՝ Մնացական Մարուքյանի կողմից 30.04.2022 թվականին ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել առարկություն՝ հարկադրված սնանկության դիմումի դեմ՝ հայտնելով, որ 2021թ. մայիսից մինչև 2022թ. Պարտապանի կողմից Պարտատիրոջը վճարվել է 10.500 ԱՄՆ դոլար: Մայիսից մինչև 2021թ. դեկտեմբերը վճարվել է 10.000 ԱՄՆ դոլարը, որն առձեռն վճարվել է անձամբ Գագիկ Չախոյանին, իսկ 500 ԱՄՆ դոլար գումարը վճարվել է քաղաքացի Հրաչյա Արզումանյանի միջոցով:

17.08.2022 թվականին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ պարտապանի ներկայացուցիչը Դատարանին ներկայացրեց «Հայտարարություն» վերնագրմամբ փաստաթուղթ, տրված քաղաքացի Կարեն Վռամի Մարտիրոսյանի կողմից՝ կազմված 17.06.2022թ-ին, ըստ որի բովանդակության՝ Արամայիս Պետրոսյանի կողմից Գագիկ Չախոյանին փոխանցված է 10.500 ԱՄՆ դոլար գումար:

Իսկ պարտավորության մնացած՝ Դիմումում չներառված մասի՝ 120.000 ԱՄՆ դոլարի 90-օրյա ժամկետը գերազանցող կետանց թույլ տալու վերաբերյալ Պարտապան Արամայիս Պետրոսյանի ներկայացուցիչ՝ Մնացական Մարուքյանը հայտարարեց, որ այն չի կարող Դատարանի կողմից Պարտապանին սնանկ ճանաչելու հիմք դիտարկվել, քանզի Դիմումատուն Դատարան դիմելիս պարտավորության այդ մասը Պարտապանին սնանկ ճանաչելու պահանջի հիմքում չի ներառել, և չէր կարող ներառել, որովհետև դիմում ներկայացնելու պահին՝ 05.04.2022թ-ին, պարտավորության մնացած՝ Դիմումում չներառված մասի՝ 120.000 ԱՄՆ դոլարի 90-օրյա ժամկետը գերազանցող կետանց Պարտապանը դեռևս թույլ չէր տվել:

Պարտապան Արամայիս Պետրոսյանի ներկայացուցիչ՝ Մնացական Մարուքյանը վերը նշված հիմնավորումներով Դատարանին խնդրեց Գագիկ Վարդանի Չախոյանի դիմումը Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին մերժել:

4.<u>Դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը Գագիկ Վարդանի Չախոյանի նկատմամբ ունի դրամային պարտավորություն:

Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը Գագիկ Վարդանի Չախոյանի նկատմամբ թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը Գագիկ Վարդանի Չախոյանի նկատմամբ ունեցած 10.000 ԱՄՆ դոլարի պարտավորությունը վճռի կայացման պահին կատարել է:

5. <u>Դատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

Ուսումնասիրելով Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու մասին դիմումը, հետազոտելով գործում առկա գրավոր ապացույցները, գնահատելով դրանք իրենց համակցությամբ՝ Դատարանը գտնում է, որ դիմումը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և

դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424 հոդվածի համաձայն՝ Պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը: Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին: Եթե պարտապանն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել: Պարտատիրոջ կողմից ստացական տալուց, պարտքային փաստաթուղթը վերադարձնելուց կամ այն վերադարձնելու անհնարինության մասին ստացականում նշելուց հրաժարվելու դեպքերում, պարտապանն իրավունք ունի կասեցնել կատարումը: Այդ դեպքերում պարտատերը համարվում է կետանցող:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի վերոգրյալ իրավանորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 90-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու համար (տե՛ս «Արարատբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Դատարանն ապացուցված է համարում, որ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը Գագիկ Վարդանի Չախոյանի նկատմամբ ունի 10.000 ԱՄՆ դոլարի պարտավորություն, որը հիմնված է գրավոր գործարքի՝ Գագիկ Վարդանի Չախոյանի և Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի միջև 10.05.2021թ. կազմված «Պարտավորագիր» վերնագրմամբ ստացականի վրա:

Դատարանն ապացուցված չի համարում, որ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը Գագիկ Վարդանի Չախոյանի նկատմամբ ունեցած 10.000 ԱՄՆ դոլարի պարտավորությունը կատարել է, քանզի որպես պարտավորության կատարումն հավաստող գրավոր ապացույց Դատարանին ներկայացված «Հայտարարություն» վերնագրմամբ փաստաթուղթը՝ տրված քաղաքացի Կարեն Վռամի Մարտիրոսյանի կողմից՝ կազմված 17.06.2022թ-ին, Դատարանի կողմից գնահատվում է ոչ թույլատրելի:

Այսպիսով Դատարանն ապացուցված է համարում նաև, որ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանը Գագիկ Վարդանի Չախոյանի նկատմամբ թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

Ինչ վերաբերում է դիմողի ներկայացուցչի՝ պարտավորագրի մնացած 120.000 ԱՄՆ դոլար գումարի կետանցված լինելուն, Դատարանը գտնում է, որ Դիմումատուի ներկայացուցիչը դուրս է եկել սնանկության դիմումով ներկայացված փաստական հիմքերի շրջանակից, ուստի այն քննության առարկա չի դարձնում:

Սույն գործով հաստատված փաստերը համադրելով վերը նշված իրավական նորմերի հետ՝ Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա են Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու հիմքերը, ուստի նրան սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը ենթակա է բավարարման,

Միաժամանակ, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի 1-ին մասի «ը» կետի և 93 հոդվածի 1-ին մասի պահանջը, Դատարանը գտնում է, որ պետք է արգելանք դնել Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն, սույն գործով դատական ծախսը բաղկացած է Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը Դատարան ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարից, որը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կազմում է 200.000 ՀՀ դրամ և վճարվել է դիմող Գագիկ Վարդանի Չախոյանի կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումը ենթակա է բավարարման, ուստի հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, Դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ծախսերը պետք է դնել պարտապան Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի վրա, ու վերջինիցս հօգուտ Գագիկ Վարդանի Չախոյանի պետք է բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես կատարված դատական ծախսի՝ նախապես վճարված պետական տուրքի գումարի փոխհատուցում, և օրենքով սահմանված կարգով պահանջ ներկայացվելու դեպքում այն որպես պահանջ պետք է ընդգրկվի Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի սնանկության գործով պահանջների ցուցակում՝ տվյալ պահանջին համապատասխանող հերթում:

Այլ դատական ծախսերի վերաբերյալ ապացույցներ Դատարան չեն ներկայացվել:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3, 17, 17.1, 19, 20, 93 հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189, 191, 192 հոդվածներով՝ Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Դիմումը բավարարել. Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին ճանաչել սնանկ:

Արամայիս Ռազմիկի Պետրոսյանից հօգուտ դիմող Գագիկ Վարդանի Չախոյանի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես կատարված դատական ծախսի՝ նախապես վճարված պետական տուրքի գումարի փոխհատուցում, որն օրենքով սահմանված կարգով պահանջ ներկայացվելու դեպքում ենթակա է գրանցման Արամայիս Ռազմիկի Պետրոսյանի սնանկության գործով պահանջների ցուցակում՝ տվյալ պահանջին համապատասխանող հերթում:

Արգելանք դնել Արամայիս Ռազմիկի Պետրոսյանին պատկանող գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և այն կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ